

Դիմում-ուղերձ

Գյումրու Մուշ - 2 նորակառույց թաղամասի բնակեցումն արագացնելու նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու խնդրի մասին

Հարգելի պարոն վարչապետ և պարոն նախարար.

անշուշտ Դուք քաջատեղյակ եք, որ Գյումրու Մուշ-2 նորակառույց թաղամասի բնակեցման գործընթացում ի հայտ են եկել զգալի խոչընդոտներ: Շիրակյին առանձնահատուկ մոտալուտ ցրտաշունչ ձմռանը նորակառույց թաղամասն առավել դժվար, եթե չասենք գրեթե անհնար կլինի բնակեցնելը, իսկ ձմռանը նորակառույց բնակարաններն առանց բնակեցման թողնելն իր հերթին կբերի ծանր հետևանքներ:

Ուստի բնակարան ստացած ընտանիքների՝ տնակներից նոր բնակարաններ տեղափոխումն արագացնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է հրատապ լուծել հետևյալ խնդիրները.

1. Բնակարաններն ապահովել անխափան ջրամատակարարմամբ:

Ներկայումս նորակառույց շենքերում բնակություն հաստատած ընտանիքները հիմնականում օգտվում են թաղամասի ծայրամասում հոսող ջրի ծորակից: «Շիրակջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից բնակարաններում ջրամատակարարում չի ապահովում՝ այն պատճառաբանությամբ, թե ոչ բոլոր բնականներն են բաց, և փակ բնականներում հնարավոր չէ կանխել վթարները: Ինչպես նաև ջրաչափերի ու դրանց տեղադրման վճարներ են պահանջում բնակիչներից այն դեպքում, երբ «Գլենդել Հիլզ»-ը սանիտարատեխնիկական սարքավորումների տեղադրումն ու դրանց ցանցերի միացումներն իրականացնելու էր իր միջոցների հաշվին: Կարծում ենք՝ դրոնների փակ լինելը լուրջ պատճառաբանություն չէ, վերջին հաշվով կարելի է ներքին գործերի մարմինների ներկայությամբ, համապատասխան արձանագրություն կազմելով բացել դեռևս չբնակեցված բնակարանների դռներն ու այդ բնակարանները ևս ապահովել ջրամատակարարմամբ: Առավել ևս, երբ բնակարանները դեռևս սեփականաշնորհված չեն քաղաքացիների կողմից և պատկանում են ՀՀ կառավարությանը:

2. Կառուցապատումն իրականացնող «Գլենդել Հիլզ»-ին պետք է պարտադրել, որ վերջիններս տրամադրեն շինարարական բավարար աշխատուժ և նորակառույց բնակելի շենքերում առկա թերություններն ու բացթողումները կարճ ժամանակամիջոցում վերացնեն: Այդ թվում՝ բնակարաններում իրականացնեն գազօջախների, սանիտարատեխնիկական սարքավորումների, ջեռուցման համակարգերի միացման աշխատանքները և մի շարք բնակարաններում տեղադրված ու կոտրված սանիտարատեխնիկական սարքավորումները փոխեն նորերով:

3. Գյումրու քաղաքապետարանն էլ պետք է նորակառույց թաղամասը քաղաքի կենտրոնին կապող նոր երթուղային միջոցներով ապահովի: Տրամաբանական կլինի, եթե բացի երթուղային տաքսիներից գործի նաև ավտոբուսային երթուղի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարաններ են ստացել հարյուրավոր միայնակ

ծեր, հաշմանդամ քաղաքացիներ, բազմանդամ, սոցիալապես ծանր պայմաններում ապրող ընտանիքներ, թերևս անհրաժեշտ է, որ առաջիկա մեկ-երկու ամիսը այդ ավտոբուսները նորակառույց թաղամասի բնակիչների համար գործեն անվճար:

«Շիրակ կենտրոն» ՀԿ
23.08.2010 թ.